ներ արաւ՝ հայոց գործի յաջողութեան համար։

«Հայերը խնդրեցին որ ես Իտալիայում պաշտպան կանգնեմ իրենց դատին, յենուելով նաեւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Պիշոնի հետ ունեցած իմ բարեկամութեան վրայ։

«Ու Պիշոնը պատասխանեց ինձ.

«Եւ ոչինչ ինձ այնչափ վիշտ չէ պատճառել, որչափ հայոց տառապանքները։ Ֆրանսան պիտի պաշտպանէ նրանց ապագայ գոյութիւնը՝ տաճկական լուծից դուրս»։

«Մերակուտական (Իտալիոյ) Բոդիօի միջոցով ես դիմում արի աչքառու պետական գործիչ Լ. Բուրժուային, նա էլ այս պատասխանը տուաւ.

«Դուք կարող էք յայտնել մեր բարեկամ Լուցցատտիին, որ ես միանդամայն հաւանութիւն եմ տալիս այն պայքարին, որ նա վարում է դժբախտ հայերի մարդկայնական եւ արդար դատը պաշտպանելու համար։ Ցուսանք, որ հաշտութեան բանակցութիւնների միջոցին եւ Ազգերի ազատ Դաշնակցութեան կազմակերպմամբ՝ արժանի եւ արդար հատուցումը կը տրուի այդ՝ երկար ժամանակ տառապած ազգին, եւ որ՝ ազատութիւնը արժանի հատուցումը կը լինի նրա չարչարանքների փոխարէն (բարձր ծափեր)։

«Ես կարծում եմ, որ Իտալիայի Խորհրդարանը ի դիտութիւն պիտի առնի երկնային խօսքերը ամենէն մարդասէր եւ ազատասէր պետական գործիչներից այս մէկի, որ իր Ֆըրանսական սրտի մէջ միշտ էլ զգացել է տառապող մարդկութեան իրաւունքների իրաքանչիւր մի զարկը։

«Ցարդելի՛ պաշտօնակիցներ. ի՞նչ նոր փառք, ի՞նչ մեծ փառք, որ մեր ամենահեղինակաւոր նախարարները, որ մեր նախարարաց խորհրդի նախագահը եւ արտաքին նախարարը, երբ վերադառնան հաշտութեան բանակցութիւններից եւ ուրախ լուր բերեն այն մասին, թէ Իտալիան վստահ կարող է լինել իր արդար սահմանների համար, թէ՝ մեր ցեղակիցները վերադարձուել են իրենց սպասող մայր ժողովուրդի գիրկը, որ նրանք յայտարարել կարողանան նաեւ Հայաստանի կատարեալ ազատութեան մասին, որով նրանց նահատակութեան արմաւենին փոխուի ու դառնայ շատ դարերից ի վեր սպասուող փառքի ու խաղաղութեան արմաւենի։ (Բուռն եւ ընդհանուր ծափեր։ Բարձրաձայն հաւանութիւն։ Շատ պատգամաւորներ անձամբ շնորհաւորում են հռետորին)»։

ՀԻՆ ՀԱՅ ՇԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑ

VI

Բարեկամական ուշադրութեամբ հետեւելով քայլ առ քայլ Ց. Մանանդեանի հետազօտութեան, տարաբախտաբար, չեմ կարող յարել նորա յայտարարութեան։ Չեմ տեսնում իրօք լուսաբեր շող, որ ընդհանուր տեսութիւնների, այո եւ ոչ-երի, եթէ-ների եւ կարելիների վերայից անցնելով դար ընկնէր չինական երդիկից ներս եւ լուսաւորէր նրա մթութիւնը։

Մատենագրական նոր եւ փոքր ի շատէ արժէքաւոր նիւթեր չկան սեղանի վերայ։ Կան յայտնի նիւթերի օտարոտի եւ անկշիռ մեկնութիւններ։

Մատենագրական ցուցումները պահանջում են զգուշաւոր վերաբերում։ Նրանց արժէքը մերկացնելու համար բաւական չէ սովորական համեմատութիւնը, հարկաւոր է որոշ մեթոդ։

Հայ մատենագրութիւնը որքան եւ ծեր, աւելի մանուկ է քան նախարարական կարգի հիմնական հիւսուածքը։ Նրա վրայ նստած է Արշակունի գնիք։ Արեւելքում ֆէոդալականութիւնը նոյնքան հին է որքան նրա պատմութիւնը։ Բայց այն ֆէոդալ կարգը, որ տես-